

Հ Ն Ա Խ Օ Ս Ո Ւ Թ Ի Ի Ն

Ճանապարհորդութիւն Պողիկտեոսի 'ի Հատ 1 :

Թ Ո Ւ Ղ Թ Ե .

Տուները , կահկարասիք , և այլն :

(Շարունակութիւն)

Իր ազնուութեանը համար շնորհակալ եղանք ու ետքը այս պատասխանը տուի ես իրեն . “ Ինձի անանկ կ'երևնայ որ տանդ շինութեանը համար ընտրած արուեստաւորը Յոյն մը պիտի ըլլայ : Կը ճանչնամ իմ հայրենեացս ճարտարապետութիւնը , նոյն ձևերը , նոյն բաժանմունքները : Բայց այս բնակութիւնս խիստ մեծ է , ու չորս դին մեծութիւն ու հարստութիւն կը փալտիլին , ուր ընդհակառակն մեր տուները համեմատութեամբ շատ աւելի պզտիկ են , ու թէ որ տեսնելու արժանի բան մը՝ ունին իրենց վայելչութիւնն է , որ իւրաքանչիւր մասին իրարու հետ ունեցած յարմարութենէն առաջ կուգայ : — Իրօք ատ վայելչութիւնն է զոր մենք փուճ տեղը կ'աշխատինք 'ի գործ դնելու , և անոր պակասութիւնը լեցրնելու համար մեծամեծ ծախքերու ձեռք կը զարնենք : Մենք հարստութիւն ունինք . դուք ճաշակը ու վայելչութիւնը . իւրաքանչիւրը ունեցածովը կը ճոխանայ , ու անով չունեցածին վրայ կը միտիծարուի : Այն արտաքին նմանութիւնը որ գտար իմ ու Յունաց տուներուն մէջ , նոյն նմանութիւնը կը գտնես բոլոր նաև Հռովմայ տուներուն վրայ : Մեր ամենէն փառաւոր տաճարներէն սկսեալ մինչև չափաւոր բնակութիւննիս՝ բոլորն ալ ձերիններուն նմանութեամբը շինուած են . ուստի անօգուտ կը սեպեմ ցուցրնել քեզի այս սրահները , այս բարձր սիւները , ու այս յարկածածուկ ձեմելիքները , որովհետև այս ամէնքն են ճարտարապետին գործքերը որ ամէն տեղ կրնայ ասոր նմանները շինել : Յուցրնեմ քեզի ներքին բաները , որոնք ամէնքը կամ իմ ընտրութեամբս եղած , և կամ իմ գիւտերս են . և ասոնք ձեռք ձգելու համար է որ մէկ ծախքի մը չեմ խնայած : Սկսինք ուրեմն կեցած տեղերնէս , որ գաւթին ամենէն ներքին ու պահպանուած տեղը ըլլալուն , հոս կը պահեմ ինչ ազնիւ բան որ ունիմ . մէկը չկրնար ներս մտնել առանց գռնապանէն տեսնուելու : Հոս են դիւաններս ու ազնիւ տոհմէ ըլլալուս վը կայականները , որոնք միայն աս կողմս ամբողջ բռնած են . անդին գրուած են գրքերս , որոնց համար հմուտ գերիներէս մէկը կ'ըսէ թէ շատ հետաքրքրական բաներ կը բովանդակեն . գնելու համար շատ ստակ հարկ եղաւ ծախել երբոր համարակալի մը ստացուածքը աճուրդի հաներ էին , ” : Ես չկրցայ ինքզինքս բռնել ու յունարէն ըսի Լուկիոսին . “ Թուղթեր ու գրուածքներ շատ կը տեսնեմ , բայց քիչ գիրք : — Հաւանական է , պա-

տասխանեց անիկայ , որ տանտէրը աւելի հարստութիւն ունի քան թէ գիտութիւն , ” : Տանտէրը խօսքը առաջ տանելով կ'ըսէր . “ Այս մահճակալիս անկողինը , ինչպէս նաև այս տան անկողինները ծիրանեգոյն բուրդէ լեցուն են , փառաւորութեան տեսակ մը՝ զորն որ առջի մոցրնողը ես կրնամ սեպուիլ : — Իրաւցրնէ եզական փառաւորութիւն է , պատասխանեց Լուկիոս . միայն ցաւալին ան է որ մէկը յարգը գիտնալու համար պէտք է առաջ իմաց առնուլ : — Ես ալ այն վախճանաւ , պատասխանեց տէրը , ամէն եկողներուն կը փութամ իմաց տալու , ” :

Ետքը սկսաւ շարունակել . “ Տեսէք թէ ինչ ճարտարութեամբ գործուած է այդ միւսիտը , որուն վրայ որ դուք կը քալէք : Ամենաբարակ վերջինն ալ անկարելի է որ այդ թռչուններուն կարենայ աւելի ճիշդ ձևեր ու վայելչուց գոյներ տալ , և սակայն իրարու քով յարմարցուցած քարեր են : Օրինակի համար , այդ աղաւնին որ գետակէն ջուր կը խմէ՝ միթէ զարմանալի բան չէ : Այնպէս բնականին նման է որ կրնայ ըսուիլ թէ գլխոյն շուքը՝ ջրոյն աւելի մուծ գոյն մը կուտայ : Այս զարդերու վայելչուց կերպը առաջին անգամ 'ի գործ գրուեցաւ Կապիտոլիոն , երբորդ պուսիկեան պաւտերազմին սկիզբները . վերջէն աստուածոց բնակութենէն ինչաւ մինչև մեզի , ու հիմա մեծ յարգութեամբ կը պահենք , ” :

Այս միջոցիս ծառայ մը եկաւ իմաց տալու տիրոջը որ մէկը հարկաւոր գործողութեան մը համար զինքը կը կանչէր , ուստի մէկէն իրեն հետ դուրս ելանք ու գաւթին առջի տեղը դարձանք , ուր որ ծեր մը գտանք , նիհար , բարձր , ու գրեթէ պատառատուն զգեստով , ու ձեռքը կողով մը բռնած , որն որ շատ ծանր կ'երևնար . “ Այսօր ամսագլուխ է , ըսաւ տանտիրոջը . հաշիւը ըրի , ու բերի քեզի ինչ որ առնելիք ունիս այս ամսուանս մէջ : — Մէկ վայրկեան մ'ալ ազատութիւն պիտի չունենամ , ” կանչեց Փորտունատոս արհամարհական կերպով : Հիմա հանգիստ թող տուր զիս , ու քիչ մը ետքը եկուր , ” : Ետքը կողովովը հանդերձ ելալու վրայ էր , երբոր Փորտունատոս ձեռքէն բռնելով , ըսաւ . “ Արովհետև մէյմը եկեր ես , ստակդ հոս ձգէ , ատիկայ կրնայ իմ քովս մնալ , ” : Մենք ժպտելով իրարու նայեցանք այս պարծանաց ու միանգամայն ազահութեան վրայ . սակայն ինքը չանդրադարձաւ , ու սկսած ստորագրութիւնը այսպէս առաջ տարաւ .

“ Ընդհանրապէս Հռովմայ մեծ պալատներու մէջ սովորութիւն է որ գաւթին երկու կողմը

1 Տես Հատ . ԺԳ , եր . 110 . Հատ . ԺԵ , 114 :

մոմէ պատկերներ կը դնեն, 'ի պատիւ հռչակաւոր ու ցանկալի յիշատակաց : Տարակոյս չկայ որ գեղեցիկ սովորութիւն մըն է ասիկայ, ուստի չեմ համարձակիր վար զարնել . բայց այս արձաններս՝ որ բոլոր ճարտար արուեստաւորաց ձեռագործք են, շատ աւելի աղէկ զարդ կ'երևնան ինծի, քան թէ այն տգեղ արձանները, որոնց ոչ միայն նիւթը անպիտան է՝ այլ և շէնքերնին ալ կոպիտ : — Իրաւունք ունիս, պատասխանեց իրեն Լուկիոս . ատոնք հոս տեղս այնչափ աւելի գեղեցիկ զարդ կ'ընեն՝ որչափ քու պատկերուդ պատկերները չկարենային պիտի ընել : Պատանուոյն յանկարծական գիտողութենէն՝ Փորտունատոս իրեն սխալ մունքը իմացաւ, և անանկ վարպետութեամբ խօսքը դարձուց որ իրմէն ամենևին չէր յուսացուեր .

« Թէ որ ինծի կարելի ըլլար, պատասխանեց, գաւթին մէջ ընտանեացս պատկերները դնել, ես իմ հօրս պատկերէն առաջ անոր բարերարին պատկերը կը դնէի : »

Երբոր մենք այսպէս խօսելու հետ էինք, արևն արդէն շատ բարձրացած էր . գաւթին ամբողջ մէկ կողմէն ճառագայթները ներս կը թափանցէր : Ան ատենը գերիին մէկը, ամբողջ նշան տուած ատենը, բոլոր պատուհաններուն ծիրանիէ վարագոյրները գոցեց . ու նոյն միջոցին ուրիշ գերի մ'ալ գաւթին անդի կողմի վարագոյրները բացաւ . այս կերպով առանց տանը ներսի լոյսը արգիլելու՝ խուցերը զով կը պահուին : Լսեցի որ ձմեռը պատուհաններու վրայ եղջիւրի բարակ թիթեղներ, պապիրի տերևներ կամ կտաւ մը կը դնեն, և ամառը որպէս զի միջտաները տունը չի մանեն՝ ուռկանի պէս ցանցահիւս մը, կամ բարակ կտաւ կամ քօղ մը : Գիշերը բոլոր պատուհանները կը գոցեն տախտակէ փեղկերով, ինչպէս նաև իրիկուան գէմ մեծ զգուշութեամբ մը ճամբուն գուռը կը գոցեն : Խոշոր փակաղակներէ ու երկըթէ փականքներէ զատ նաև դռները մէկ ուրիշ շարժական ծիգով մը կ'ապահովընեն, զորն որ ամէն առտու կը վերցընեն :

Երկայն ու երկկարգեան սիւներով սրահի մը գաւթէն անցանք, ուսկից քանի մը խուցերու գիմաց ելանք, որոնք ամէնքն ալ մասնաւոր բանի մը որոշուած էին : Ասոնցմէ ոմանք գիշերը պառկելու համար էին, ոմանք ալ ցորեկը հանգչելու . իւրաքանչիւրը մէյմէկ նախասենեակ ունին, ուր որ գերի մը կեցած է անոր սահպանութեանը համար : Ամենուն մէջն ալ պատի վրայ խորշեր ձևացուցած է, որոնց մէջ գիրք կամ ուրիշ բաներ կը պահուին՝ հոն բնակողներուն համար : Բայց ամենևին գեղեցիկ երևցաւ ինծի կերակուր ուտելու սենեակը զորն որ ճաշատուն կը կոչեն : Ոսկին ու ծիրանին չորս դին կը վխտար . ձեղունը բոլոր փղոսկրէ թիթեղներով ծածկած էր . արուեստով շարած ու ոսկիէ ժապաւէններով բաժնած : Այս չափէ գուրս շքեղասիրութենէ յափշտակուած, չկրցայ ներսի զգացածս արտաքին նշաններով չցուցնել : Ինքը Փորտունատոս ալ իմացաւ այս բանս, ու « Կարծեմ թէ, ըսաւ, այս մասը քուկին ալ կընկալուութեանդ բողորովին համաձայն չտեսար . արդեօք պակասութիւն մը կը գտնես : — Կը կասկածիմ, ըսի, որ համեմատութեան կանոնները աղէկ դիտուած չըլլան : — Ատոր համար, պատասխանեց, ճարտարապետս մեզագրութեան արժանի

է . սակայն զրուցածդ միայն չէ, դեռ ուրիշ շատ բաներ ալ կան, զորոնք ըստ տեղւոյն ու ժամանակին ուղղել պիտի տամ : »

« Բայց, — խօսքը առաջ տանելով ըսաւ, — խուցէ խուց մանեւէն գուցէ ձանձրացած ըլլաս, ուստի կարծեմ որ աւելի լաւ կ'ըլլայ թէ որ ուրիշ տեսակ գեղեցիկութիւններ քեզի ցուցնեմ : » Առաւ հանեց զմեզ մինչև տանը վերին յարկը, ուր որ զարմացած մնացի՝ երբոր տեսայ գեղեցիկ տեսքով խուց մը, վայելուչ պարզութեամբ զարդարած : Պատերուն չորս պատուհաններէն բոլոր քաղաքը կ'երևնար : Մէկ քանի հանգիստ աթոռներ, ծաղկամաններ, և մէկ հանգչելու պզտի անկողին մը, խցին բոլոր կահկարիսիքն ու զարդն էին : « Այս է ասա մեր Արեգգէմ¹ կոչածը, ըսաւ ինծի տանտէրը, որովհետև սովորութիւն ունինք առտուն հոս գալ, արևու ելլելուն գեղեցիկ տեսարանը դիտելու, ու անոր առջի ճառագայթիցը քաղցրութիւնը վայելելու : Այս պատուհանէս կը տեսնուի ասա Կապիտոլինոնը, քիչ մը դէպ 'ի ձախ գին է Արամագոյ Ամպրոպայնոյն տաճարը, անկէց անդին է Արիսեան դաշտը, ու քիչ մ'ալ հեռու Տիբեր գետը : Ետևի կողմդ կ'երևայ Պիսիդոնի տաճարը, ու աս հոյակապ շէնքին քովը կը բարձրանայ մեծ կրկէսին կոթողը : »

« Այս պզտի խցիս մէջը կը քաշուիմ, ըսաւ, երբոր աշխարհքիս աղմկալից շփոթութիւններէն ձանձրանալու ըլլամ : Հոս ամէն բան պարզ ու խաղաղ է, ու առանց արգելքի՝ կրնամ իմ մտածութեանցս հետ ըլլալ : — Ի վերայ այս ամենայնի, ըսաւ Լուկիոս, ասա մէկ պզտի կահկարասի մը, որ այդ պարզութեան ճարմարիտ, ու կը ցուցնէ որ հոս տեղս պարզ մտածելու հետ միայն չես ըլլար : » Ու ցուցուց մէկ բեկկնիէ սասրնջի տախտակ մը, որուն վրայ քանի մը բիւրեղէ քուէներ ու սատրնջի քարեր կային, բայց չէ թէ ճերմակ ու սև, ինչպէս որ սովորութիւն է, այլ ոսկիէ ու արծրթէ : Ինքզինքը իմաստուն ցուցնող՝ հիւպատին որդւոյն աս անգրագարձութենէն կտոր մը շփոթած մնաց . « Ի՞նչ կ'ուզես, պատասխանեց, միշտ մինակ ըլլօլը անկարելի է : Երբեմն երբեմն հոս տեղս իմ բարեկամներէս ոմանք կը ժողվեմ, ու հետերնին կը զուարճանամ աս խաղով, որ շիտակը շատ զուարճալի խաղ է . արդեօք դու ալ գիտես : — Չէ ամենևին : — Քարերը հետզհետէ կը քայքայեն նետած քուէներուն ցուցրցած թուոյն համեմատ, և բոլոր խաղցողին վարպետութիւնը բաղդը լաւ գործածելուն, և կամ ըստ պարագայից ուղղելուն վրայ է : Գիշերուան կէսը աս խաղովս անցուցի, անոր համար է տունս մտած ատեննիդ՝ զիս քուէի մէջ գտաք : — Ուրեմն բաւական է այսչափս, պատասխանեց Լուկիոս : Կը ցաւինք որ այդպիսի իրաւացի հանգիստ մը ընդհատեցինք : Ընդունէ մեր շնորհակալութիւնները, ու բաղդին քեզի առած պարգևները այսպէս խելքով գործածելդ շարունակէ . գուցէ քուկին օրինակդ հռովմայեցուց օգտակար ըլլայ : » Երբոր վար իջանք, երկայն բարակ սրահ մը քուէցինք որ տանը մէջտեղն է ու Անիւսուս² կըսուի . որովհետև բոլոր չորս կողմի շէնքերուն ջրերը մէջը

1 Լատ . Solarium.
2 Լատ . Impluvium.

կը վազեն . և վերջին հայեցուած մը տալով այս գերույ որդւոյն փառաւոր պաշտին , տանը ետևի գունէն դուրս ելանք , որ աւելի ուղղակի ճամբով մեր տունը կ'իջնայինք :

Գունէն դուրս որ ելանք , “ Ասոնք են ուրեմն , կանչեցի , այն առաքիլնի Հռովմայեցոց սերունդքը : — Յաջորդները զուրցէ , , տաքութեամբ մը պատասխանեց Ղուկիոս : Ան ատենը Սիրոս ըսաւ . “ Աղէկ է մասժութիւնդ , սիրելի Ղուկիոս , այս մարդուս վրայօք , որն որ պարզ անուամբ միայն Հռովմայեցի է , ու ուրիշ բան չներկայացըներ , բայց եթէ աւելի հռչակաւոր նախատիպներու ծիծաղելի բազմութիւն մը . սակայն այս նախատիպները այսօրուան օրս կենդանի են , և այնպէս բազմաթիւ որ քիչ ատենէն ալ անոնց երեսը նայող պիտի չըլլայ : Աւելի այն հին Հռովմայեցիները մատով պիտոր ցուցուին , որոնք նոր փառաւորութեանը մէջ , կրցեր են հին պարզութեան հետքը պահել : Ինչպէս յիշատակարաններ որ տեղ տեղ աշխարհքի մը հնութիւնը կը վկայեն , ասանկ ալ իրենք դեռ քիչ մը ժամանակ պիտոր ցուցընեն թէ ինչ էին իրենց հարքը , ինչուան որ ժամանակը , որ ամենայն բան կ'աւերէ , քանի մը քիչ ու տարտամ յիշատակներ միայն ձգէ : Ատեն պիտի գայ որ ձեր պատմութեան արձանագրած մեծ գործողութիւնները տարակուսի տակ պիտոր իյնան , որովհետև մարդիկ պիտի չկարենան անոնց նմանները գործել , և ետքի եկողներուն ալ աւելի ախորժելի ըլլալով հաւատք չընծայել այն առաքիլութեանց որ չունին , որպէս զի իրենք իրենցմէ չամը չնան՝ պիտի ուրանան անոնց գոյութիւնը :

ՄԱՆՐԱՎԷՊՔ

Անշխորոշիւն :

Սիւլըրօլի սեպուհը պատերազմի մէջ ձախ սրունգը կորսընցուցած ըլլալով փայտէ սրունգ մը կը գործածէր : Սուրիչ պատերազմի մը մէջ ալ երբ ելեր թշնամեաց ամրութիւնները կը դիտէր՝ ուսմբ մ՝ ալ եկաւ նորէն նոյն սրունգը տարաւ : Սեպուհն առանց այլայլելու . “ Սումբը , ըսաւ , իմ սրունգներուս հետ կ'ուզէ խաղալ . բայց ալ աս անգամ ծաղր եղաւ . չէր դիտէր որ սայլիս մէջ ուրիշ սրունգ մը պատրաստ ինծի կը սպասէ , ,” :

Փոնդընուայի հռչակաւոր պատերազմին տաքցած ատենը Ղուկովիկոս

ժե չորս կողմը իյնող ուսմբերը ժողվել տալով , կանչեց թնդանօթաձիգներուն զօրապետը ու ժպտելով մը “ Սա գնտակները ըսաւ թշնամեաց ետ խրկէ , ես իրենցմէ ընծայ չեմ ուզեր քովս պահել , ,” :

Սպանիացի ասպետ մը որ մէկ աչքը կորսնցուցած էր , օր մը խաղի տուն մը կը մտնայ ու կը սկսի գնտակ խաղալ : Ինչպէս կ'ըլլայ հոն դիպուածով հարուած մ՝ ալ մէկալ աչքին կ'առնու , որով այն ալ կը կորսընցընէ : Բռանց ամենևին այլայլելու գլխարկը գլխէն կը հանէ ու ընկերներուն դառնալով , “ Սիւլըր բարի բարեկամներ , ,” կ'ըսէ ու դուրս կ'ելլէ :

Բյսպիսի կարգէ դուրս դէպքեր շատ կը պատմուին նաև մեծին Վաբուլէոնի վրայ , որ թէ պատերազմաց և թէ բազմազգի դաւակցութեանց մէջ իր անշիտթ կերպովը կուսակցացը քաջալերութիւն էր , և թշնամիքը կ'ահաբեկէր : Հասարակ զինուորականի մը վրայ ալ եթէ նոյն քաջութիւնը տեսնէր , մէկէն առաջ կը քաշէր զինքը : ()ը մը պատերազմի դաշտին մէջ իր գրագիրը դիմացն առած նամակ մը գրել կու տար : Երբ միջոցին թշնամեաց կողմանէ ուսմբ մը ճայթելով իրենց երկուքին մէջ ինկաւ : Վրագիրը առանց խռովելու “ Սուրախ եմ , ըսաւ , որ նամակին վրայ փողի ցանելու կարօտութիւն չունեցանք , ,” . ու մէկէն ծալելով Վաբուլէոնի ձեռքը տուաւ : ()արմացաւ սպարապետը , և հազարապետի աստիճանը տուաւ իրեն :